ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի
Ռազմադաշտային թերապիայի ամբիոնի պետ.
փոխգնդապետ՝ պրն. Վարդան Ծատուրյանին:

Հարգանքներով՝
Յուրիկ Քեշիշյան

Հեռ: +37499-88-10-18

28.10.22թ.

ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի

Ռազմադաշտային թերապիայի ամբիոնի պետ,

Գնդապետ՝ պրն. Վարդան Ծատուրյանին

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Հարգելի պարոն Ծատուրյան

Ես՝ Էդվարդ Բեղլոյանս, այս նամակով ցանկանում եմ հայտնել իմ խորին երախտագիտությունը ընդհանուր վիրաբուժության 2-րդ կուրսի կլինիկական օրդինատոր կապիտան Վլադիմիր Սարգիսի Մանվելյանին՝ իր մասնագիտական պրոֆեսիոնալիզմի, իմ հանդեպ ուշադրության և հոգատարության համար:

Այս տարվա հունիսին Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի աբդոմինալ և էնդոկրին վիրաբուժության ծառայության բժիշկները՝ պրոֆեսոր Սուրեն Աղոյի Ստեփանյանի գլխավորությամբ ինձ կատարեցին խոլեցիստէկտոմիա: Հետվիրահատական բուժման շրջանում կապիտան Վլադիմիր Մանվելյանը նշանակվեց իմ բուժող բժիշկներից մեկը: Բառերով անհնար է նկարագրել այն աջակցությունը, մասնագիտական լուրջ մոտեցումը, սրտացավությունն ու հոգատարությունը, որը բժիշկները և մասնավորապես կապիտան Մանվելյանը ցուցաբերել և շարունակում են ցուցաբերել իմ նկատմամբ:

Իմ խորին շնորհակալությունը և երախտագիտությունն եմ հայտնում Վլադիմիր Մանվելյանին և ուրախ եմ , որ մեր բանակը համալրվում է բարձր որակավորում ունեցող այսպիսի երիտասարդ մասնագետներով :

**Հարգանքներով՝** Էդվարդ Բեղլոյան

**28/10/22թ.** **ՀԵՌ: +37499-88-10-18**